

**«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ  
(ՀԱՇՎԱՐԿԱԴՐԱՍԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

*Ուժի մեջ է 2015թ. փետրվարի 25 -ից*

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդների հաշիվների բացման, սպասարկման, փակման, փոխանցումների իրականացման, գումարի կանխիկ տրամադրման, «ACBA ON-LINE» համակարգով ծառայությունների մատուցման, չեկային գրքույկների տրամադրման, անհատական պահատեղերում արժեքների պահատվության ծառայության, ինչպես նաև արժեթղթերի առքուվաճառքի և պահառության գործառնությունների և հաճախորդների ֆինանսական գործունեության հետ կապված այլ ծառայությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սույն սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սույն սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է սույն սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սույն սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել սույն սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար սույն սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Սույնով հայտնում ենք, որ Բանկի հանդեպ ընթացիկ հաշվի հետ կապված բոլոր պարտավորությունները Բանկի կողմից լրիվ կամ մասնակի կհաշվանցվեն Հաճախորդների Բանկում ունեցած բոլոր բանկային հաշիվներից:

9. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

<b>ՀԱՇՎԱՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ</b>	
1. Հաշվի բացում Ընդ որում՝ հաշվի բացման պայմաններն են հանդիսանում՝ - Բանկի կողմից սահմանված տիպային պայմանագրի կնքումը, - «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկի լրացումը Հաճախորդի կողմից, - Հաճախորդի համաձայնությունը՝ ՀՀ, օտարերկրյա և միջազգային օրենսդրություններով սահմանված դեպքերում և կարգով Բանկի կողմից իր մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն երրորդ անձանց հրապարակելու վերաբերյալ:	անվճար
2. Ընթացիկ հաշվի միջին օրական մնացորդի շեմ՝ հաշվի անվճար սպասարկման համար՝	
- ԳՓՄՍ անդամներ <sup>1</sup>	5,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
- ռեզիդենտներ ( ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերեր)	20,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
- ռեզիդենտներ (իրավաբանական անձինք)	50,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
- ոչ ռեզիդենտներ	50,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
2.1. Ընթացիկ հաշվի միջին օրական մնացորդի շեմը վերաբերում է բոլոր արժույթներով հաշիվների առանձին-առանձին, սակայն հաճախորդը կարող է բոլոր ընթացիկ հաշիվների գծով շեմի պահանջն ապահովել առնվազն մեկ ընթացիկ կամ ավանդային հաշվի վրա:	
3. Ընթացիկ հաշվի սպասարկման միջնորդավճար (անկախ հաշիվների քանակից)	
3.1. Ֆիզիկական անձանց համար	
- եթե ֆիզիկական անձի՝ Բանկում ունեցած ընթացիկ հաշիվների տվյալ ամսվա միջին օրական մնացորդը մեծ կամ հավասար է սույն սակագների 2-րդ կետով սահմանված շեմից	անվճար
- եթե ֆիզիկական անձի՝ Բանկում ունեցած ընթացիկ հաշիվների տվյալ ամսվա միջին օրական մնացորդը փոքր է սույն սակագների 2-րդ կետով սահմանված շեմից	ամսական 300 ՀՀ դրամ
3.2. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար	
- եթե իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ Բանկում ունեցած ընթացիկ հաշիվների տվյալ ամսվա միջին օրական մնացորդը մեծ կամ հավասար է սույն սակագների 2-րդ կետով սահմանված շեմից	անվճար
- եթե իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ Բանկում ունեցած ընթացիկ հաշիվների տվյալ ամսվա միջին օրական մնացորդը փոքր է սույն սակագների 2-րդ կետով սահմանված շեմից	ամսական 1000 ՀՀ դրամ
3.3. Ընթացիկ հաշվի սպասարկման միջնորդավճարը գանձվում է հաճախորդի հաշվից յուրաքանչ-յուր ամսվա վերջին բանկային օրը:	
3.4. Ընթացիկ հաշվի սպասարկման միջնորդավճարը գանձվում է հաճախորդի դրամային հաշվից: Դրամային հաշվի բացակայության դեպքում այն գանձվում է հաճախորդի արտարժույթային հաշվից, և արտարժույթի փոխարկումը կատարվում է տվյալ օրվա համար ՀՀ ԿԲ հրապարակած արտարժույթների միջին փոխարժեքով: Հաշվարկը կատարվում է ընթացիկ հաշվի բացմանը (վերաբացմանը) հաջորդող և հաշվի փակմանը նախորդող ամիսների համար:	
3.5. Ընթացիկ հաշվի փակման դեպքում՝ նախկինում հաշվարկված սպասարկման վարձը չի գանձվում և գրոյացվում է:	
3.6. Ընթացիկ և/կամ ժամանակավոր հաշվի սպասարկման վարձի բացասական մնացորդի իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար 3,000 ՀՀ դրամին, իսկ ֆիզիկական անձանց համար 600 ՀՀ դրամին հավասարվելուն պես՝ ավտոմատ կերպով դադարեցվում է հետագա ամիսների սպասարկման միջնորդավճարների պարտքի կուտակումը:	
4. Ընթացիկ հաշվի վերաբացում՝	
4.1. Ֆիզիկական անձանց համար	600 ՀՀ դրամ
4.2. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար	3,000 ՀՀ դրամ
4.3. Ընթացիկ հաշիվների վերաբացման վարձը գանձվում է յուրաքանչյուր հաշվի վերաբացման համար, սակայն մեկ գործառնական օրվա ընթացքում ոչ ավել, քան 600 ՀՀ դրամ ֆիզիկական անձանց համար և 3,000 ՀՀ դրամ՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար	
5. Սույն սակագների 3-րդ և 4-րդ կետերի դրույթները չեն կիրառվում հետևյալ դեպքերում՝ - եթե ֆիզիկական անձ հաճախորդն ունի միայն գործող վճարային քարտեր, որոնցից մեկն առնվազն արտարժույթային է, և միայն ընթացիկ դրամային հաշիվ - եթե ֆիզիկական անձ հաճախորդն ունի միայն գործող արտարժույթային քարտ և միայն այդ քարտի սպասարկման համար բացված ընթացիկ դրամային հաշիվ, - POS-տերմինալների և առցանց վճարումների սպասարկման գծով Բանկի հետ համագործակցության պայմանագիր ունեցող առևտրի և սպասարկման կետերի և ինտերնետ-խանութների ընթացիկ հաշիվների նկատմամբ, - պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց կողմից հիմնադրված ոչ առևտրային կազմակերպությունների ընթացիկ հաշիվների նկատմամբ, - այն հաշիվների նկատմամբ, որոնք բացվել կամ վերաբացվել են և/ կամ օգտագործվում են հաճախորդի կողմից կենսաթոշակ ստանալու նպատակով: - Բանկում ժամանակավոր հաշվի առկայության դեպքում՝ այդ հաշիվը բացելու կամ վերաբացելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:	

<sup>1</sup> ԳՓՄՍ՝ Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորում հասարակական կազմակերպություններ

6. Ընթացիկ հաշիվների հետագա օգտագործման կամ վերաբացման դեպքում սպասարկման վարձի նախկինում կուտակված պարտքը և հաշվի վերաբացման միջնորդավճարը չի գանձվում՝ եթե հաճախորդը ներդնում է ժամկետային ավանդ:	
7. Հաճախորդին հաշվի քաղվածքի (այդ թվում՝ կրկնօրինակի) տրամադրում	անվճար
8. Փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրում	
- մինչև 3 ամիս վաղեմության դեպքում	1,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- 3 -12 ամիս վաղեմության դեպքում	2,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- 1- 3 տարի վաղեմության դեպքում	5,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- 3 տարուց ավել վաղեմության դեպքում	10,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
9. Տեղեկանքների տրամադրում, լիազորագրի պատրաստում և հաստատում	
- աուդիտորական հարցման պատասխան	5,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- այլ տեղեկանքների տրամադրում	3,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- տեղեկանքների տրամադրում նույն աշխատանքային օրվա ընթացքում	5000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- լիազորագրի պատրաստում և հաստատում	3000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
-պետական ռեգիստրի տեղեկանքի տրամադրում	3000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
10. Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների ընթացիկ հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք՝ ՀՀ դրամով և արտարժույթով հաշիվների համար՝	0%
11. Իրավաբանական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր) հանդիսացող հաճախորդների ընթացիկ հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք՝ ՀՀ դրամով հաշիվների համար՝	
- եթե հաճախորդի՝ Բանկում ունեցած ընթացիկ հաշվի տվյալ ամսվա միջին օրական մնացորդը չի գերազանցում 20,000,000 ՀՀ դրամը (ներառյալ)	0%
- եթե հաճախորդի՝ Բանկում ունեցած ընթացիկ հաշվի տվյալ ամսվա միջին օրական մնացորդը գերազանցում է 20,000,000 ՀՀ դրամը	1%
12. Իրավաբանական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր) հանդիսացող հաճախորդների ընթացիկ հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք՝ արտարժույթով հաշիվների համար՝	0%
Ընթացիկ հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը և տարեկան տոկոսային եկամտաբերությունը* համընկնում են:	
<ul style="list-style-type: none"> <li>- Ֆիզիկական անձանց ընթացիկ հաշվի պայմանագրի գործողության ընթացքում ստացված տոկոսագումարները ենթակա են հարկման 10%-ի չափով՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն:</li> <li>- ԱՎԲԱ-ԿՐԵԳԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿՈՒՄ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից» հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝ <ul style="list-style-type: none"> <li>- միայն դրամային ավանդների դեպքում - 4 մլն ՀՀ դրամ,</li> <li>- միայն արտարժույթային ավանդի դեպքում - 2 մլն ՀՀ դրամ,</li> <li>- և՛ դրամային (2 միլիոնից ավել), և՛ արտարժույթային ավանդների դեպքում միայն դրամային ավանդը - մինչև 4 մլն ՀՀ դրամի չափով,</li> <li>- և՛ դրամային (2 միլիոնից պակաս), և՛ արտարժույթային ավանդների դեպքում - դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 2 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:</li> </ul> </li> <li>- Ընթացիկ հաշիվների համար Բանկի կողմից նախատեսված կամ սահմանված չեն տարեկան տոկոսային եկամտաբերությունը նվազեցնող սակագներ կամ այլ պայմաններ:</li> <li>- Տոկոսագումարները հաշվարկվում են հաշվին առկա միջին օրական մնացորդի նկատմամբ, ամսական կտրվածքով:</li> <li>- Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:</li> <li>- Ընթացիկ հաշվի պայմանագիրը կնքվում է անժամկետ:</li> </ul>	

\* 1000 դրամ ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույթի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը